




## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

2665

3K26

4-89



24.05.2013

07 JUN 2005

20 NOV 2009

3K26

4-89

4.

300

1428-40

Պատկանում է բոլոր յեղեցների, միացել.

Ն. Կ. ԿՐՈՒՊՍԿԱՅԱ



ՎԼԱԴԻՄԻՐ ԻԼՅԻՆ

== ՄԱՍԻՆ ==

1922

485

Թարգմ. Հովհ. Հովհաննիսյան

ՅԵՐԵՎԱՆ  
1924

## ԽՍՀՄ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՅԵՐԿՐՈՐԴՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ԱՐՏԱՍԱՆԱԾ ՃԱՌԸ

Ընկերներ, այն, ինչ վոր յես ասելու յեմ, ամենից քիչ պարզամենտական վոր և և ճառի նման պիտի լինի: Բայց վորովհետեւ ասում եմ աշխատավորների հանրապետությունների ներկայացուցիչներին, մոտիկ, սիրելի ընկերների, վորոնք կյանքը պիտի շինեն նոր հիմունքների վրա, ուստի, ընկերներ, կարծում եմ, վոր յես չպիտի կաշկանդեմ ինձ վոր և և պայմանական ձևականություններ:

Ընկերներ, վերջին որերը, յերբ յես կանգնած եյի վրացիների Իլիշի դադադի առաջ, մտքիս մեջ յես նրա ամբողջ կյանքն եյի պրպտում, և ահա թե ինչ եմ կամենում ձեզ ասել՝ նրա սիրտը արտփում եր ջերմ սիրով զեպի բոլոր աշխատավորները, բոլոր ճնշվածները:

Այդ նա ինքը յերբեք չեր ասում, յես ել յերևի չեյի տալ ուրիշ, ավելի նվազ հանգիստվոր պարագայում: Այդ մոտին յես խոսում եմ այն պատճառով, վոր այդ զգացմունքը նա ժառանգություն եր ստացել ուս հերոսական հեղափոխական շարժումից: Այդ զգացմունքը ստիպեց նրան վազով չափ, ջերմաջերմ պատասխան խնդրելու, թե վորը պիտի լինի աշխատավորների ազատագրություն ու պին: Իր հարցերի պատասխանները նա ստացավ Մարքսից: Մարքսին մոտեցավ նա վոչ զրամսի նման: Նա մոտեցավ Մարքսին վորպես մի մարդ, վոր ցավագին, անխուսափելի հարցերի պատասխան և խնդրում: Յեվ նա գտավ այդ պատասխաններն ու տարավ բանվորներին:

Ինչնանական թվականն եր:

Այն ժամանակ միտինգներում չեր կարող նա խոսել:

Նա գնաց Պետրոգրադ, բանվորական խմբակների մեջ: Գնաց պատմելու ինչ վոր ինքն եր իմացել Մարքսից, պատմելու Մարքսի զրվածքներում գտած պատասխանները: Յեվ նա վոչ միայն խոսում ու պատմում եր, այլ և ուշադրությամբ ականջ եր դնում, թե ինչ են ասում իրեն բանվորները: Յեվ Պիտերի բանվորները խոսում եյին վոչ միայն գործարաններում տիրող կարգերի մասին, վոչ միայն բանվորների ճնշման մասին: Նրանք խոսում եյին իրենց գյուղի մասին:

Միությունների Տան գահլիճում, Վլադիմիր Իլյիչի զագաղի մոտ, յես մի բանվոր տեսա, վոր այն ժամանակները Վլադիմիր Իլյիչի խմբակի մեջ եր յեղել: Նա Տուլայի նահանգի գյուղացի յեր: Յեվ ահա այդ գյուղացին, Սեմյաննիկովի գործարանի բանվորը, ասել և Վլադիմիր Իլյիչին. «Այստեղ, — ասում ե, — քաղաքումը ամեն բան բացաղբերը դժվար և ինձ համար, կգնամ իմ Տուլայի նահանգը և ամեն բան կասեմ, ինչ վոր դուք եք ասում. կասեմ իմ հարազատներին, մյուս գյուղացիներին: Նրանք ինձ կհավատան, յես իրենցից եմ: Յեվ վոչ մի ժանդարմ այնտեղ մեզ արգելք չի կարող լինել»:

Ահա մենք շատ ենք խոսում բանվորների ու գյուղացիների շագկապի մասին: Այդ շագկապն, ընկերներ, ինքը պատմությունն և մեզ ավել: Ռուս բանվորը մի կողմից բանվոր և, իսկ մյուս կողմից՝ գյուղացի: Պիտերի բանվորների մեջ գործելով, նրանց հետ զրույց անելով, ուշադրությամբ ականջ դնելով նրանց խոսքերին՝ Վլադիմիր Իլյիչը ըմբռնեց Մարքսի մեծ միտքը, այն միտքը, թե բանվոր դասակարգը բոլոր աշխատավորների առաջադահ գունդն և և թե նրա յեակիցն են գնում աշխատավոր մասսաները, բոլոր ճնշվածները, թե այս և նրա ուժն ու նրա հաղթության առհավատչյան: Բանվոր դասակարգը վորպես բոլոր աշխատավորների առաջնորդ միայն կարող և հաղթել: Այս հասկացավ Վլադիմիր Իլյիչը Պիտերի բանվորների մեջ գործելիս: Յեվ այս միտքը, այս գաղափարը

խնամվորում եր նրա հետագա ամբողջ գործունեությունը, նրա յուրաքանչյուր քայլը: Նա իշխանություն եր ուզում բանվոր դասակարգի համար: Նա հասկանում եր, վոր այդ իշխանությունը բանվոր դասակարգին պետք և վոչ թե ուրիշների հաշվին իրեն համար անուշ կյանք ստեղծելու նպատակով. նա հասկանում եր, վոր բանվոր դասակարգի պատմական դերը բոլոր ճնշվածներին, բոլոր աշխատավորներին ազատագրելն և: Այս հիմնական գաղափարի զրոշմը կա Վլադիմիր Իլյիչի ամբողջ գործունեությունում:

Ընկերներ, խորհրդային հանրապետությունների, աշխատավորների հանրապետությունների ներկայացուցիչներ, ձեզ եմ դիմում և խնդրում եմ մանավանդ Վլադիմիր Իլյիչի այս գաղափարը ձեր սրտին մոտ ընդունեք:

Յես ուզում եմ, ընկերներ, մի քանի վերջին խոսք ասել: Ընկերներ, մեռավ մեր Վլադիմիր Իլյիչը, մեռավ մեր սիրելին, մեր հարազատը:

Ընկեր կոմունիստներ, բարձր պահեք Լենինի սիրեցյալ դրոշակը, կոմունիզմի դրոշակը:

Ընկեր բանվորներ ու բանվորուհիներ, ընկեր գյուղացիներ ու գեղջիկուհիներ, աշխատավորներ համայն աշխարհի, սեղմ շարքերով միացած՝ Լենինի դրոշակի, կոմունիզմի դրոշակի տակ անցե՛ք:

26 Հունվ. 1924 թ.

ԸՆԿԵՐ ԲԱՆՎՈՐՆԵՐ ՈՒ ԲԱՆՎՈՐՈՒՇԻՆԵՐ, ԳՅՈՒՂԱՑԻ-  
ՆԵՐ ՈՒ ԳԵՂՋԿՈՒՇԻՆԵՐ

Մի մեծ խնդիրք ունեւ՝ չթողնեք, վոր ձեր արտառութունը Իլլիչի համար նրա անձնավորութեան արտաքին մեծարանքով արտահայտվի: Հուշարձաններ մի կանգնեք նրան, նրա անվան նվիրված պալատներ մի կառուցեք, նրա հիշատակին շքեղ հանդեսներ մի սարքեք և այլն. այդ բոլորին շատ քիչ կարեւորութիւն էր տալիս նա իր կենդանութեան որով, ճշգրտւմ էր այդ բոլորից: Աչքի առաջ ունեցե՛ք, թե վորքան աղքատ ու անբարեկարգ է մեր յերկիրը: Կամենում էք հավերժացնել Վլադիմիր Իլլիչի անունը — շինեցե՛ք մատրներ, մանկապարտեզներ, մանկատներ, դպրոցներ, գրադարաններ, ամբուլատորիաներ, հիվանդանոցներ: անկեղանոցներ և այլն և վոր գլխավորն է՝ յեկեք ամեն բանում նրա ավանդներն իրականացնենք:

30 Հունվ., 1924 թ.

ԼԵՆԻՆՅԱՆ ԿՈՁԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊՐՈՊԱԳԱՆԴԻ ՇԵՐՔԱԿԱՆ  
ԽՆԴԻՐՆԵՐԸ

(Զեկուցված է Լենինյան կոչի առթիւ գործելու նպատակով աշխատակոչի յենթարկվածների ժողովում)

ՊԵՏԷ Ե ԱՌՎԱՐԵԳՆԵԼ ԼԵՆԻՆԻՅԱՆ ԵՈՒՐՈՒՆԵՆ ԸՄՔՈՆԵԼ

Ընկերներ, լենինիզմն ուսումնասիրելիս ամենակարեւորն, ի հարկե, մանրամասնութիւնները, ճիշտ անունները, թվականները, իսկական բառերը և այլն մտքում պահելը չէ: Լենինիզմով պարապողներին պետք է սովորեցնել հասկանալ ընկ. Լենինին: Լենինի գրվածքների ուսումնասիրութեան գլխավոր խնդիրը հենց Լենինին հասկանալը, Լենինիզմը հասկանալն է:

Մի անգամ առիթ ունեցա խոսելու Վլադիմիր Իլլիչի հետ մարքսիզմի ուսումնասիրութեան մասին Սվերդլովի համալսարանում: Յեւ կարդացել էյի Սվերդլովի համալսարանի տեղեկագիրը, վորի մեջ պատմված էր, թե ինչ փոփոխութեամբ ուսանողներն ուսումնասիրում են արժեքի տեսութիւնը: Այնտեղ պատմված էր, թե ինչպէս մի ուսանող ամբողջ արժեքի փորոշման մասին վիճաբանելուց հետո առաջնորդ գեւ այնպէս շշմած է յեղել, վոր դուրս է թուել փողոց, բռնել է մի անցորդի և սկսել և հարցնել, թե ինչպէս կորոշե՞նա, ինչ բան է արժեքը: Յերբ յես այդ դեպքը պատմեցի Լենինին, նա ասաց, թե այդ մարքսիզմ չէ, թե Մարքսին ուսումնասիրելիս պետք չէ փորոշումների ճշտութեան, զիտութեան բոլոր կանոնների համաձայն բանաձեւելու մանրամասնութիւնների հետեւից ընկնել: Մարքսիզմի ուսումնասիրութեան ժամա-

նակ գլխավորը մարքսիզմի վոզին ըմբռնելն է, հիմնական  
գաղափարներն ըմբռնելն է, մարքսիզմն իրականության  
հարմարեցնելը:

**Մարքսիզմի լուրջ ուսումնասիրությունն անհրաժեշտ է**

Յեւ մահա, ընկերներ, յեթե մենք ուզում ենք վերո-  
շել, թե ինչ է Լենինիզմը, պիտի ասենք, թե այդ ժամա-  
նակակից իրականությանը հարմարեցրած մարքսիզմն է:  
Այդ իրականությունն ուսումնասիրելու, նրա վրա ներ-  
դրծելու համար Լենինի գործադրած մեթոդներն ըստ  
եության վոչ այլ ինչ են, բայց յեթե մարքսիզմի մեթոդ-  
ները: Ուստի յեթե դուք կամենաք խմբակներում, այն  
դասընթացներում, վորտեղ պարապելու լինեք, հետամուտ  
լինել, վոր կուրսանտները, ունկնդիրները վորքան կարելի  
յե լավ հասկանան լենինիզմը, դուք ամենից առաջ պետք  
է հետամուտ լինեք, վոր այդ կուրսանտները հասկանան,  
թե ինչ է մարքսիզմը, վորն է մարքսիստական մեթոդը,  
մարքսիստական վերաբերմունքն իրականությանը: Պետք  
է ցույց տալ, թե ինչպես եր հասկանում Մարքսը դասա-  
կարգային պայքարը, ինչպես եր հասկանում, թե ինչպես  
է վոր կողմն է գնում հասարակության զարգացումը,  
թե ինչպես ոգնեց նա իր տեսությամբ դասակարգային  
պայքարի զարգացմանը, ոգնեց բանվոր դասակարգին գի-  
տակցելու պատմության նրա առաջ զբաղ խնդիրները:  
Այս պատճառով մարքսիզմի, նրա հիմունքի ուսումնասի-  
րության վրա պետք է ամենալուրջ ուշադրություն դար-  
ձնել: Արդի յերիտասարդությունը շատ հաճախ մոռանում  
է գործի այս կողմը և ընթացիկ իրականության խնդիր-  
ները քննելիս հաճախ մոռենում է նրանց վոչ թե մարք-  
սիզմի տեսակետից, այլ խիստ վերացական կերպով  
սկսում է վիճել մանր-մունք բաների մասին, առանց ար-  
մատականորեն յերևույթի եությունը գնահատելու: Հին  
սերունդը, վոր մարքսիզմին հասել է յերկար վորոնում-  
ներից հետո, զիտի, ի հարկէ, մարքսիզմը, բայց նոր սե-

րունդը ուրիշ ճանապարհով է գնացել: Նա մեծացել է  
ուղղակի հեղափոխական պայքարի կրակի մեջ, և մարք-  
սիզմը նրա համար այն չէ, ինչ վոր հին սերունդի հա-  
մար եր: Պետք չէ մոռանալ այս իրողությունը և պետք  
է նոր սերունդը զինել մարքսիստական մեթոդի ըմբռմամբ,  
տալ նրան գիտական սոցիալիզմի աշխարհայեցողու-  
թյուն, զինել այնպիսի գենքով, վոր ոգնել նրան գլուխ  
հանել ընթացիկ բարդ իրականությունից:

**Ինչից պետք է սկսել Լենինիզմի ուսումնասիրությունը**

Ինչպես պետք է ձեռնարկել այս գործին: Նախ  
պետք է կուրսանտներին հասկացողություն տալ, թե ինչ  
է գիտական սոցիալիզմը, ինչ է մարքսիզմը:

Պետք է ցույց տալ, թե ինչպես եր վերաբերվում  
ընկ. Լենինը մեր իրականության հիմնական խնդիրներին,  
թե նա հետեողական մարքսիստ եր, և դրանում եր նրա  
ուժը: Այստեղ կարևորն այն չէ, վոր պարզվի, թե ինչ  
կարծիք է հայտնել ընկ. Լենինը բոլոր մասնավոր խն-  
դիրներին մասին, կարևորը փաստը փաստի վրա շարելը  
չէ, այլ պետք է վերցնել ամենահիմնականը, ամենաեա-  
կանը, ամենաբնորոշը և այդպիսիով սահմանել հիմնավո-  
րապես ուստնելի գլխավոր գործը:

Լենինիզմն ուսումնասիրելիս անհրաժեշտ է ամենից  
առաջ կանգ առնել այն հարցի վրա, թե ինչպես եր Լե-  
նինը մոտենում ընթացիկ իրականության յերևույթների  
ուսումնասիրությանն ու գնահատությանը:

Ընկ. Լենինը միշտ ձգտում եր վարդելու, թե ինչ  
զեր է կատարում տվյալ յերևույթը բանվոր դասակարգի  
իր վերջնական իդեալներին հասնելու համար մղած ընդ-  
հանուր պայքարի մեջ: Ահա յերևույթների այդ կլասսի-  
ֆիկացիան, նրանց տեղն ընդհանուր շղթայի մեջ վորոշե-  
լու կարողությունն է մեզ համար շափազանց կարևոր, յեթե  
ուզում ենք այդ յերևույթների վրա ներդրծելու միջոց-  
ներ գտնել:

ՊԵՏԻ Ե ԽԱՇՎԻ ԱՌՆԵԼ ՎԵՐԱՆԳՆԵՐ

Հետո, ինչպես պետք է առաջ առարվի այդ ուսումնասիրութիւնը: Գործը յետ այսպէս եւմ պատկերացնում: Այստեղ չափազանց կարևոր է ունկնդրի անհատականութիւնն աչքի առաջ ունենալ. նրա անձնական փորձը, նրա եմոցիոնալ ապրումները: Յեթն գյուղացիների հետ զործ ունենք, կարևոր է վերցնել գյուղացիական խնդիրը և ամենից առաջ ուսումնասիրել, թէ ինչպէս եր վերաբերվում էնինքն գյուղացիական խնդրին, իսկ յեթն զործ ունենք գյուղից կտրված արդյունաբերութեան բանվորների հետ, պետք է վերցնել պրոլետարիատի դիկտատուրայի, բանվոր դատակարգի դերի խնդիրը, տոնտարակ մտտենալ բանվորին մտտիկ տեսակետից: Ահա այս է խիստ կարևոր, փոր կարողանանք ընդունել այն, ինչ փոր մեկին ամենից շատ է հետաքրքրում, ինչ փոր ավելի խիստ կերպով է կապված նրա անձնական ապրումների, նրա փորձի հետ:

Վերջին ժամանակներս ասիի մենեցա նաչելու ընկ-  
 Լենինի կենսապրության ժողովրդական յեղանակով գրված  
 մի քանի ձևապրեր, վոր գյուղացիական մաս-  
 տաների համար են կազմված, և ինչ: Այդ կենսապրու-  
 թյունները մի քանիսի մեջ շատ մանրամասն խոսվում  
 և, որինակ, յերկրորդ համադումարում տեղի ունեցած  
 վիճարանությունների մասին կանոնապրության առաջին  
 կետի վերաբերմամբ, մենչեիկների մասին և այլն: Մի  
 բան միայն մոռանում են—ընկ. Լենինի վերաբերմունքը  
 հողի խնդրին: Գրել գյուղացիների համար և կանոց շտանել  
 այն բանի վրա, վոր ամենից շատ և նրանց հետաքրք-  
 րում, ~ այդ ել մի հունար և:

**Յերեվանցիները բնակի լին իրենց կոնկրետ միջավայրում**

Ինչպես պետք է ուսումնասիրել լենինիչղր: Յես  
այսպիսի յեղանակ խորհուրդ կտայի. պետք է վերջնել  
րնկ, կենինի վերարերմունքը մի վուր հ ե խնդրի յերկար

տարիներ ընթացքում և տեսնել, թե ինչպես և նա լուծել այդ խնդիրը տարբեր կոնկրետ միջավայրերում: Պետք է, որ ինակի համար, այս տեսել ղյուղացիական խնդրի նկատմամբ: Պետք է քննել, թե ինչո՞ւ առաջ հատարած իններեի և հողի պարտավճարները վերագարձնելու խնդիրն եր գրվում, իսկ 1917 թ. հոկտեմբերին հրատարակվեցավ հողի վերաբերյալ գեկրեաը, վարտեղ խոսքը կալվածատիրական ըստը հողերը հոգուտ պետութւթյան գրավելու և ժողովրդին ի սեպհականություն տալու մասին է: Լենինիցմը հասկանալու համար չափազանց կարեոր է ընդունել մի և հույն գաղափարը տարբեր կոնկրետ միջավայրերում:

Ունկնդիրները հետ իրենց ավելի մոտիկ խնդիրները մատին ունեցած հայացքի եվույուցիան վերլուծելուց հետո, կարծում եմ, պետք է վերցնել ընթացիկ իրականութեան վրէ և ե խնդիր և ներկայի այդ կոնկրետ խնդիրը աշխատել լուսաբանել ամեն կողմից և մոտենալ նրան այն մեթոդով, վերով ընդ, կենինը մոտենում եր իրականութեան ուսումնասիրութեանը:

Ինձ թվում է, թե ընկ. Լենինի զրվածքների այս լեզանակով ուսումնասիրությունը կտա այն, վերին անհրաժեշտ է ձգտել, կտա ընկ. Լենինի ըմբռնումը, նրա զրվածքների վոզու ըմբռնումը, թեև չի տա, յերևի, այդ զրվածքներին տիրացուական զիտություն: Յես կարծում եմ, վեր հենց այսպես պետք է մոտենալ Լենինիզմի ուսումնասիրությունը:

Բոլոր մարքսիստները, Վոլանց թվում նաև ընկ. Լե-  
նինը, ամեն մի յերևույթ քննում են իր կոնկրետ միջա-  
վայրում: Մի կտոր և միաս զալիս մի զրվածքից, վոր  
ժամանակին մեծ ազդեցություն և ունեցել մեր սերնդի  
վրա: Այդ Միրատվի «Պատմական նամակներն» և: Այնտեղ  
ասված և, թե ամեն զրոշակ, վորոշ մոմենտում հեղափո-  
խական լինելով հանդերձ՝ հետագայում կարող և ուակ-  
ցիայի զրոշակ դառնալ: Յեւ ահա յեթե մենք մեր մոտիկ

հեղափոխական անցյալին նայենք, կռենենք, որինակ, թե ինչպես սահմանադիր ժողովն սկզբում հեղափոխական նշանաբան լինելով՝ դարձավ ռեակցիայի նշանաբան: Յերբ սկզբում դեռ վոչ մի բանվորական իշխանութիւն չկար, յերբ ցարիզմն եր թագավորում, սահմանադիր ժողովն այն նշանաբանն եր, վոր նշանակում եր պայքար բանվոր դասակարգի ազատ զարգացման, նրա համար հետազայում կազմակերպելու և զարգանալու հնարավորութեան համար: Իսկ խորհրդային իշխանութեան որով, խորհուրդներին II համագումարից հետո, սահմանադիր ժողովն արդեն բոլորովին այդ չեր նշանակում: Սահմանադիր ժողովը նշանակում եր, վոր բանվորների ու գյուղացիների՝ ի դեմս խորհուրդների, ստեղծված հեղափոխական իշխանութիւնը տեղի պիտի տար սահմանադիր ժողովի իշխանութեանը, մի բուրժուական իշխանութեան, և այն նշանաբանը, վոր ավյալ մոմենտում ռեակցիայի նշանաբան դարձավ: Պայքարի վախճանական նպատակները և վոչ թե արտաքին յերևույթները հասկացողը հասկանում եր, ինչպես վոր այդ բոլորները հասկացան, վոր բանվոր դասակարգի շահերն ի նկատի ունենալով՝ պետք և ցրել սահմանադիր ժողովը:

Ով վոր յերևույթները քննում եր նրանց զարգացման կոնկրետ միջավայրից դուրս, բնավ չեր հասկանում այս և ներքին հակասութիւնն եր գտնում այստեղ: Այն ինչ հենց սրանում եր վորոշ հետեղականութիւն յերևան գալիս, այն հետեղականութիւնը, վոր հեղափոխական պայքարի վերջնական նպատակն եր թելադրում:

Լենինիզմի հատկանիշներից մեկն ահա փաստը իր կոնկրետ միջավայրում քննել կարողանալն է: Ի հարկէ, այս վոչ այլ ինչ է, բայց յեթե մի մարքսիստական յեղանակ, բայց այս գործադրել պետք եր իմանալ, և այս և այն դնահատելին, վոր լենինիզմը մտցրել և հեղափոխական տակտիկայի մեջ, և այս ահադին նշանակութիւն ունի:

Այնուհետև մեր ունեցած ամեն մի յերևույթ մենք պիտի քննենք իր զարգացման մեջ: Այսորով ժողովից առաջ թերթում եյի վլ. Իլյիչի շարադրութիւնները և սահմանադիր ժողովին վերաբերյալ մի հոգված կարգացի: Ինչպես և նա քննում այնտեղ այդ խնդիրը: Նա նայում և, թե ինչպես ստեղծվեց ավյալ սահմանադիր ժողովը, ինչպես եր ընդհանուր դրութիւնը, ինչ եյին մտածում ժողովրդական մասսաները, յերբ ընտրում ու սահմանադիր ժողովն եյին ուղարկում իրենց ներկայացուցիչներին, ինչ եր այն ժամանակ նրանց գիտակցութեան աստիճանը: Հետո նա քննում և, թե հետազայում ինչպես պիտի գործէ ավյալ սահմանադիր ժողովը, և այն յեզրակացութեանն և հանգում, վոր իշխանութիւնը սահմանադիր ժողովի ձեռքը տալը խորհուրդների վոչնչացումն և նշանակումը, այսինքն՝ բանվորների ու գյուղացիների հեղափոխական իշխանութեան վոչնչացումը: Մենք տեսնում ենք, վոր ընկ. Լենինը հետևում և յերևույթի զարգացմանը և սրա շնորհիվ ուղիղ յեզրակացութիւնն և անում, վորով վորոշվում և տակտիկան — պետք և ցրել սահմանադիր ժողովը:

#### ՊԵՏԷ Ե ՈՒՇԱԳՐՈՒՄԱՄԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼ ԻՐԱԿԱՆՈՒՅՈՒՆԸ

Ընկ. Լենինն աշխատում եր վորքան կարելի յէ ձիշտ վորոշել վոր և և յերևույթի իրական դոյութեան սահմանները, ստեղծելով իր սեպհական և իր ընկերների վործովը, հետո ծանոթանում եր ուսաց և ոտար դրականութեանը, վորոնում, գտնում եր համանման յերևույթներ, բաղդատում եր և այդպիսով յերևան եր հանում յերևույթի եութիւնը, պարզում եր, թե ինչ և ավյալ յերևույթի: Այս յեղանակը կարելի յէ համեմատել այն յեղանակի հետ, վոր զեղարվեստագետը իրերն և ուսումնասիրում: Ֆրանսիացի հեղինակ Ֆլորենը Մոպասանին գրած իր նամակներում խորհուրդներ և տալիս նրան, թե ինչպես պետք և ուսումնասիրել յերևույթները՝ զեղարվեստականորեն պատկերացնելու համար:

Ֆլորերը գրում է. յեթե կամենում ես պատկերավոր ու պայծառ նկարագիրը տալ, որինակ, մի բարապանի կամ կառապանի, նայիր նրան և աշխատիր առանձնացնել այն բոլոր գծերը, վորոնցով այս կառապանը կամ այս բարապանը տարբերվում է բոլոր մնացյալ բարապաններից, բոլոր մնացյալ կառապաններից, այն ժամանակ յերկու յերեք ուրվագծով կարելի յե նրան վորոշել այնպես, վոր նրա պատկերը կենդանի կը կանգնի ընթերցողի առաջ: Այս խորհուրդները վերաբերում են զեղարվեստական ստեղծագործություններ: Բայց յես կարծում եմ, վոր մարքսիստները նույն կերպ պիտի մոտենան յերևույթներին: Նրանք պետք է ճշտեն յերևույթները, առանձնացնեն համանման յերևույթներից նրանց տարբերող առանձնահատկությունները, այն յերևույթներից, վոր ունենք մեր յերկրի անցյալում ու այլ յերկրների ներկայումս ու անցյալում: Յեվ այս յեղանակով եր սովորաբար Լենինը դնահատում յերևույթները:

Այսպես ուրեմն յերևույթի ուսումնասիրությունը, նրա առանձնահատկությունների վորոշումը, տեսականորէ կշռի վորոշումը, կոնկրետ միջավայրում և իր զարգացման մեջ քննելն իրականությունը մոտենալու այն հատկանիշներն են, վոր բնորոշում են յենինիզմը:

21 մարտ — 1924 թ.

## ՎԼԱԴԻՄԻՐ ԻԼՅԻՆԻ ՄԱՍԻՆ

Վլադիմիր Իլյինի մասին շատ են գրում հիմա: Այդ հիշողություններում Վ. Իլյինն հաճախ ներկայացնում են վորպես մի ճգնավոր, առաքինի ընտանիքավոր քաղաքինի: Ազավազում են նրա պատկերը: Այդպես չէր նա: Նա մարդ էր, վորի համար վոշ մի մարդկային բան ոտար չէր: Սիրում էր նա կյանքն իր բոլոր բազմակողմանիությամբ, ազահույթյամբ իր ներսն էր ձծում կյանքը:

Մեր կյանքը նկարագրում են, վորպես զրկանքներով լի մի կյանք: Սխալ է այդ: Այնպիսի կարոտություն, յերբ մարդ չի խմանում, թե ինչով հաց գնե, մենք չենք տեսել: Միթե այդպես էլին ապրում մեր տարագիր բնկերները: Այնպիսիներն էլին լինում, վոր յերկու տարով վոշ աշխատանք էլին ունենում, վոշ Ռուսաստանից էլին վոզ ստանում, բառացի՝ սոված էլին մնում: Մենք այնպիսի բան չենք տեսել: Ճիշտ է, հասարակ էլինք ապրում: Բայց միթե կյանքի ուրախությունը կուշս ու վարկամ ապրուստի մեջ է:

Վ. Իլյինը կյանքից իր ուրախությունները քաղել գիտեր: Շատ էր սիրում նա բնությունը: Ել չեմ խոսում Սիրիի մասին, բայց տարագրություն մեջ ել մենք միշտ վոր և է տեղ էլինք գնում քաղաքից դուրս ամբողջ կրթությամբ շունչ քաշելու, գնում էլինք հեռու — հեռու և տուն էլինք վերադառնում ոգից, շարժումից, ապավորություններից հարբած: Մեր վարած կյանքը խիստ տարբերվում էր մյուս տարագիրների կյանքից: Նրանք սիրում էլին անվերջ զրույցներ, խոսակցություն թեյի սեղանի շուրջ, ծխի քուլաներում: Վլադիմիր Իլյինն այդպիսի խոսակցու-

թյունից շատ եր հոգնում և միշտ աշխատում եր հեռա-  
նալ զբոսներու: Հիշում եմ, մեր տարագրության առաջին  
տարին Մյունխենում մի անգամ վերցրինք մեզ հետ զբոս-  
ներու Մարտովին և Մանա Իլինիչնային, փորպետի ցույց  
տալինք նրանց մեր սիրած տեղը, — Իզարի վայրի ամբ,  
փորտեղ պետք եր անցնել, չգիտեմ ինչ թփերի միջով: Կես  
ժամից հետո նրանք այնքան հոգնեցին ու սկսեցին տր-  
տընջալ, փոր մենք շտապեցինք նավակով անց կացնել  
նրանց քաղաքի կուլտուրական մասը և առանց նրանց  
գնացինք «մեր» տեղը: Մինչև անգամ Լոնդոնում հնար  
եյինք դանում բնության ծոցը դուրս գալու, իսկ այս  
ծխից սկսած, մառախլապատ հրեշ — քաղաքից դուրս դա-  
լըն այնքան ել հեշտ բան չե, մանավանդ յեթե չես ու-  
զում մեկ ու կես պենսից ավելի ծախսել հանրակառքի  
համար:

Հետո, յերբ Զվիցերիայում մենք հեծանիվներ ձեռք  
բացեցինք, մեր զբոսանքների շրջանակը շատ ավելի լայ-  
նացավ: Հիշում եմ, ինչպես մի անգամ Լոնդոնում վերա  
Իվանովնա Զասուլիչը մի բնկերի, փոր կարծում եր թե  
Իլլիչը շարունակ Բրիտանական թանգարանում նստած և  
և շատ զարմացավ, փոր պատրաստվում և զբոսանքի գը-  
նալու, զայրացած ասաց. «Ախր նա բուռն կերպով սիրում  
և բնությունը»: Հիշում եմ, յես մտածեցի այն ժամանակ.  
«Ծիշտ և ասում»:

Սիրում եր Իլլիչը նաև կենցաղ զիտել: Ուր ասես  
չեյինք գնում նրա հետ Մյունխենում, Լոնդոնում, Փարի-  
զում: Սիրում եր հայտարարություններ կարդալ սոցիա-  
լիստների ժողովների մասին արվարձաններում, փորքիկ  
կաֆեներում, անգլիական յեկեղեցիներում: Նա ուզում  
եր տեսնել զերմանացի, անգլիացի, ֆրանսիացի բանվոր-  
ների կյանքը, լսել նրանց խոսելը վոչ մեծ ժողովներում,  
այլ մոտիկ բնկերների շրջանում, լսել թե ինչի մասին և  
նա մտածում, ինչով և ապրում: Ինչ նախընտրական ժո-  
ղովներում ասես չեյինք լինում Փարիզում: Այն յերկրի

բանվորի կենցաղը, փորտեղ փորտեղ մենք  
ավելի լավ եյնք ճանաչում, քան տարագրները:  
Հիշում եմ, մի ժամանակ Փարիզում մենք հափշտակ-  
ված եյինք ֆրանսիական հեղափոխական շանտոնետով:  
Վրացիմիր Իլլիչը ծանոթացավ Մոնտեզյուսի հետ, փոր  
հեղափոխական յերգերի մի շատ տաղանդավոր հեղինակ եր  
և յերգող: Ինքը կոմմունարի փորգի, բանվորական թա-  
ղերի սիրելին եր Մոնտեզյուսը: Իլլիչը մի ժամանակ շատ  
եր սիրում յերգել նրա յերգը. «Salut à vous soldats de 17»  
(«Վողջույն ձեզ, 17-րդ դնդի զինվորներ») — այդ մի գի-  
մումն եր այն ֆրանսիացի զինվորներին, փորոնք հրաժար-  
վել եյին գործադուլ անողներին վրա հրացան արձակելուց):  
Իլլիչը համարում և Մոնտեզյուսի մի այլ յերգին,  
փոր ծաղրում և այն սոցիալիստի պատգամավորներին,  
փորոնց բնարել եյին սակավ զիտակից գյուղացիները և  
փորոնք 15 հազար ֆրանկ պատգամավորական ոռճկի հա-  
մար պարլամենտում ժողովրդի սպառությունն եյին վաճա-  
ռում... Սկսվեց մեր թատրոններ հաճախելու շրջանը:  
Իլլիչը հայտարարություններ եր փորոնում Փարիզի ար-  
վարձաններում տրվող թատերական այն ներկայացումների  
մասին, փորտեղ Մոնտեզյուսը պիտի հանդես գար: Փա-  
րիզի հատակագիծը ձեռներին՝ համարում եյինք հեռու ար-  
վարձանը: Այնտեղ ամբոխի հետ նայում եյինք պիեսին,  
մեծ մասամբ մի սենտիմենտալ անվայել դատարկաբանու-  
թյուն, փորով այնպիսի սիրով ֆրանսիական բուրժուազիան  
կերակրում և բանվորներին, իսկ հետո հանդես եր գալիս  
Մոնտեզյուսը: Բանվորները նրան կատաղի ծափահարու-  
թյուններով եյին ընդունում, իսկ նա, բանվորի բաճկոնով,  
վզին թաշկինակ վաթաթած, ինչպես այդ անում են ֆրան-  
սիացի բանվորները, նրանց համար յերգեր եր յերգում  
որվա չարիքի մասին, ծաղրում եր բուրժուազիային,  
յերգում եր բանվորի ծանր վիճակի և բանվորների հա-  
մերաշխության մասին: Փարիզի արվարձանների ամբոխը  
բանվորական ամբոխ և, ամեն բանի իր կենդանի վերա-



բերմունքն և ցույց տալիս, — բարձր նորածն գլխարկով մի ակննույ, վորին ամբողջ թատրոնն սկսում և անաղ անել, պիյեսի բովանդակությունը: «Այ դու, անգղամ», գոռում և բանվորը գերասանի վրա, վոր իր գեռահաս անվոր աղջկանից անվայել պահանջ անող մի անատիրոջ գեր և կատարում: Իլլիշին դուր եր գալիս այս բանվորական մասսայի մեջ լուծվելը: Մանտեգյուսը մի անգամ հանգես չեկավ մեր ուսանական յերեկութներից մեկում և յերկար, մինչև խոր գիշեր, նա նստած եր Վլադիմեր Իլլիշի հետ և խոսում եր սպագա համաշխարհային հեղափոխության մասին: Կոմմունարի վորդին ու ուսու բողջեիկը, յուրաքանչյուրն իր հասկացածի պես եր յերազում այդ հեղափոխության մասին: Պատերազմի ժամանակ Մոնտեգյուսն սկրսեց հարեհասարական յերգեր գրել:

Մի այլ շրջան ել ունեցանք, — այդ նախնորական ժողովներ հաճախեին եր, վորտեղ բանվորները գալիս ելին՝ յերեխաները հետները, վորովհետև տանը նրանց նայող չունեին: Լսում ելինք բանախոսներին, նայում ելինք, թե ինչն և հուզում, յեղբարականացնում ամբոխին, հիանում ելինք մի վիթխարի դարբնի վրա, վոր հրճվանքով բանախոսին եր նայում, և նրան կպած պառանի վորդու կիսամանկական կերպարանքին, վոր հոր նման աչքերով կարծես ուզում եր ուտել բանախոսին: Լսում ելինք սոցիալիստ պատգամավորին բանվորների լսարանի առաջ խոսելիս, իսկ հետո գնում ելինք լսելու նրան մտավորականության, պաշտոնեության առաջ խոսելիս, և տեսնում ելինք թե ինչպես այն մեծ ու բորբոքիչ գաղափարները, վոր վառում ելին բանվորական լսարանը, նախանում ելին, բանախոսի բերանում մանր բուրժուազիայի համար բնորոշելի դուրս ելին ստանում: Պետք եր վորքան կարելի և շատ քվե շահել: Յեւ ժողովից վերադառնալիս Իլլիշը մրմունք եր Մոնտեգյուսի յերգը սոցիալիստ պատգամավորի մասին «T'a ben, dit mon ga!»

Լոնդոնում գնում ելինք Հայդպարկը փողոցային հոե-

տորներին լսելու: Մեկը խոսում եր ասածու մասին, մյուսը՝ թե ինչպես վատ են ապրում գործադատները, յերրորդը՝ քաղաք-պարտեզների մասին: Գնում ելինք Ուոյտ-Չեպլ, Լոնդոնի հրեական թաղը, և ծանոթանում ելինք աշխատող ուսմանականների հետ, չքավոր հրեաների հետ, լսում ելինք նրանց թախծալից ու հուսահատ յերգերը: Գնում ելինք մի շրջան, վորտեղ մի յերիասասարդ անգլիացի սոցիալիստ գեկուցում եր անում մունիցիպալ սոցիալիզմի մասին, իսկ կուսակցության մի հին անգամ, վոր նախորդ որը հանգես եր յեկել վորպես մի սոցիալիստ ակաեր «եթ քույրերի» սոցիալիստական յեկեղեցում մի յուրաստանական ժամակարգության ժամանակ և բացաղբում եր, թե հրեաների յեղբր Յեզիպատից պետք և հասկանալ վորպես նախաարի բանվորների յեղբր՝ կապիտալիզմի թաղավորությունից սոցիալիզմի թաղավորությունը, — ահա այդ մարդը հարձակվում եր յերիասասարդ գեկուցանողի վրա սպառնալու յանիզմի համար....

Կորոզանալ գիտել կյանքը, մարդկային կյանքն, իր բազմակողմանիությամբ ու յուրահատուկ արտահայտություններով, գտնել կյանքի մեջ սեպհական սպրտմաների ներգաղնակ հնչյունների, միթե այդ կյանքը վայելել չի նշանակում, միթե ճգնափորը կարող և այդ անել:

Վլադիմիր Իլլիշը սիրում եր մարդկանց: Նա իր սիրած մարդկանց լուսանկարները իր սեղանի վրա չեր դնում, ինչպես մեկը նկարազրել եր վերջերս: Բայց սիրում եր մարդկանց կաթոլիկ: Սիրում եր, որինակ, Պիխանովին: Պիխանովը խոշոր գեր և կատարել Վլ. Իլլիշի դարդացման մեջ, ոգնել և նրան ուղիղ հեղափոխական ճանապարհ գտնելու, և այս պատճառով յերկար ժամանակ Պիխանովը նրա աչքում մի տկնածելի անձնավորություն եր, մի ամենատանջան տարածախություն Պիխանովի հետ խիստ ցավալի սպրտման եր նրա համար: Պառակտումից հետո ել նա ուշադրությամբ եր վերաբերվում Պիխանովի ասածներին: Ինչ ուրախությամբ կրկնում եր Պիխանովի

խոսքը. «Ձեմ կամենում ուղարկւոյն խառ մեռնել»: Մինչև անգամ 1914 թ., պատերազմը բռնկելուց հետո, Վլ. Իլյիչը սաստիկ հուզվում էր, յերբ պատրաստվում էր հանգես գալու պատերազմի դեմ Լոդաննում, մի միախնդում, վորտեղ Պլեխանովը պիտի խոսեր: «Մեթե չի հասկանա», — ասում էր Վլադիմիր Իլյիչը: Պ. Ն. Լեպեշինսկու հիշողություններում մի միանգամայն անհավատալի կտոր կա: Լեպեշինսկին պատմում է, թե Վլադիմիր Իլյիչը մի անգամ ասել է նրան. «Պլեխանովը մեռավ, իսկ յես, այ կենդամի յեմ»: Այսպիսի բան չէր կարող լինել: Յերեկ, մի այլ ներուժյուն է յեղել, վոր Պ. Ն. չի նկատել: Վլ. Իլյիչը յերբեք իրեն Պլեխանովին չի հակադրել: Մեր յերիտասարդ ընկերները կուսակցության պատմությունն ու ուսմանսիրելիս, յերեկ, պարզ չեն պատկերացնում, թե ինչ բան էր պառակտումը մենչեիկներին:

Վոչ միայն Պլեխանովին էր սիրում Վլադիմիր Իլյիչը, այլ և Զասուլիչին և Աքսելրոդին: «Այ կը տեսնես Վերա Իվանովնային, բյուրեղի հատուկություն ունի», — ասաց ինձ Վլադիմիր Իլյիչը Մյունխեն գալուս առաջին յերեկոն: Յերկար ժամանակ նա ակնածելի էր համարում նաև Ակսելրոդին:

Վերջին ժամանակը, մահից քիչ առաջ, հարցրեց Աքսելրոդի մասին (ցույց տվեց լրագրի մեջ նրա ազգանունը, հարցրեց «ինչ»), խնդրեց հեռախոսով հարցնել նրա մասին Կամենսկին և ուշադրությամբ լսեց պատմածս: Յերբ յես պատմեցի նրան Ա. Մ. Կալմիկովայի մասին և զբանից հետո նա ասաց «ինչ», յես արդեն զիտեյի, վոր Պոտրեսովի մասին էր հարցնում: Պատմեցի, ինչ վոր զիտեյի, և հարցրի. «ավելի հանգամանորեն իմանամ»: Նա բացասական կերպով զուխը շարժեց:

«Ասում են, Մարտովն էլ է մեռնում», — ասաց ինձ Վլադիմիր Իլյիչը խոսելու ընդունակությունը կորցնելուց քիչ առաջ: Յեվ մի մեղմություն կար նրա խոսքերի մեջ: Անձնական սերը գեպի մարդիկ յերբեք չէր ազդում

Վլ. Իլյիչի քաղաքական դիրքի վրա: Վորքան էլ վոր սիրում էր Պլեխանովին կամ Մարտովին, բայց և այնպես իր հարաբերությունները կարեց նրանց հետ քաղաքականապես (մեկի հետ քաղաքականապես կապը կարելուց հետո, նա այդ անում էր և անձնապես. ուրիշ կերպ չէր ել կարող, յերբ ամբողջ կյանքը կապված էր քաղաքական պայքարի հետ), յերբ այդ հարկավոր յեղավ գործի համար:

Բայց մարդկանց անձապես սիրելու հետևանքով պառակտումներն աներևակայելի ծանր էյին Վլ. Իլյիչի համար: Հիշում եմ, թե ինչ վատ էր զգում իրեն Վլ. Իլյիչը, յերբ յերկրորդ համապումարում պարզվեցավ, վոր անխուսափելի յե պառակտումը Աքսելրոդից, Զասուլիչից, Մարտովից և այլն: Ամբողջ գիշերը նրա հետ նստած մտացինք զոգարով: Յեթե Վլ. Իլյիչն այնպիսի հափշտակությամբ չսիրեր, այնպես շուտ չէր ուժաստատ լինի: Քաղաքական ազնվությունը, — բառիս իսկական, խոր իմաստով, — ազնվություն, վոր քաղաքական դատողությունների ու գործողությունների մեջ բոլոր անձնական համակրություններից ու հակակրություններից հրաժարվել կարողանալն է, — ամենքին հատուկ չէ, և ով վոր ունի այդ ազնվությունը, դյուրավ չէ ձեռք բերված:

Վլադիմիր Իլյիչը միշտ շատ էր հետաքրքրվում մարդկանցով, շարունակ պատահում էր, վոր «վոգեորվում էր» մարդկանցով: Մի հետաքրքրական հատկություն էր նկատում մեկի մեջ և կպչում էր նրանից: Հիշում եմ նրա յերկու շաբաթվա «ոռմանը» Նախմանտնի հետ, վոր հիացրել էր նրան յուր կազմակերպչական տաղանդով: Նախմանտնի մասին էր, վոր խոսում էր: Մանավանդ կըպչում էր Վլադիմիր Իլյիչը Ռուսաստանից յեկողներին: Յեվ սովորաբար, Վլադիմիր Իլյիչի հարցումների ազդեցության տակ, վարակվելով նրա տրամադրությամբ, մարդիկ իրենք էլ այս չնկատելով, իրենց հոգու լավագույն մասը բաց էյին անում նրա տոռ, իրենց յեսի լավագույն մաս

սր, վոր արտահայտվում էր իրենց վերաբերմունքի մեջ գեպի գործը, նրանում թե ինչպես են մտաւնում գործին: Նրանք աւամա բանաստեղծական գուշն եյին տալիս իրենց աշխատանքին, յերբ պատահում էյին Իլլիշին: Ստա-  
տիկ հափշտակվում էր Իլլիշը մարդկանցով, սաստիկ հափ-  
շտակվում էր աշխատանքով: Այս յերկուսը միախառնվում  
էյին և այդ նրա կյանքը դարձնում էր վերին աստիճանի  
հարուստ, ինտենսիվ, լիալիր: Նա յուր մեջ էր առնում  
կյանքը յուր բոլոր բարդութեամբն ու բազմակողմանիու-  
թեամբը:

Իլլիշը, յուր կյանքի ու մարդկանց բմբռնողութեամբ,  
յուր ջերմ վերաբերմունքովը գեպի ամեն ինչ, ամենից քիչ  
այն առաքին քաղբենին էր, ինչպես վոր նրան յերբեմն  
պատկերացնում են ընտանիքի որինակելի աւեր, կին,  
յերեխաներ, ընտանիքի անդամների լուսանկարները  
սեղանի վրա, գիրք, բամբակով խալաթը հագին, մոռան  
կառովի ձաղը ծնկներին, իսկ շուրջը մեծատան մի «փոք-  
րիկ սարք ու կարգ», վորտեղ Իլլիշը «հանգստանում է»  
հոտարակական կյանքից: Վլադիմիր Իլլիշի յուրաքանչյուր  
բալլը անց են կացնում մի քաղաքի սենտիմենտալութեան  
պրիզմայի միջով: Լավ կլինի, քիչ գրեն այս նյութերի  
մասին:

Վլադիմիր Իլլիշը վոչ մի բանի տյնպես չէր արհա-  
մարհում, ինչպես ամեն տեսակ ասե-կոսեները, բամբա-  
սանքները, ուրիշի անձնական կյանքին միջամտելը: Այդ-  
պիսի միջամտութեան նա անթույլատրելի էր համարում:

Յերբ մենք աքսորավայրում էյինք ապրում, Վլ. Իլ-  
լիշը հաճախ խոսում էր այդ մասին: Նա ասում էր, թե  
պետք է ամեն կերպ հեռու մնալ աքսորավայրի ամեն  
տեսակ պատմութեաններից, վոր սովորաբար ծաղում են  
ասե-կոսեներից, բամբասանքներից, ուրիշների սրտում  
յեղածը գուշակելուց, դատարկ հետաքրքրութեանից:  
Այդ կորստաբեր քաղբենութեան է:

Լոնդոնում 1902 թ. Վլադիմիր Իլլիշը մի խիստ ընդ-

հարում ունեցավ «Թակրալի» խմբագրութեան մի մասի  
հետ, վոր կամենում էր դառնլ մի ընկերի՝ աքսորավայ-  
րում ունեցած յուր մի անվայել վարմունքի համար:  
Վննութեան ժամանակ ընտանաբար կոպիտ միջամտու-  
թեան պիտի տեղի ունենար նրա անձնական կյանքի մեջ:

Վլադիմիր Իլլիշը կարուկ կերպով բոլորեց զրա գեմ  
և հրաժարվեց այդ խայտառակութեանը մասնակցելուց,  
ինչպես ինքն էր այդ անվանում: Հետո նրան մեղադրում  
էյին, թե նորազգացութեան շունի...

Կարծում եմ, վոր յեթե մեկը պահանջում է, վոր ու-  
րիշի հոգին չբրբրեն, այդ խտական նորազգացութեան  
արտահայտութեան է:

11 ապրիլ. 1924 թ.

### ՊԻՏԵՐԻ ՃԱՆԱՊԱՐԶԻՆ

Վերջին ձմեռը (1916—1917) մենք ապրում էինք Ցյուրիխում: Ուրախ չէր մեր կյանքը: Կտրվում էր մեր կապը Ռուսաստանի հետ. նամակ չէինք ստանում, մարդ չէր գալիս այնտեղից: Տարագիրների զաղութից—վոր շատ սակավաթիվ էին այն ժամանակ Ցյուրիխում—մենք, ըստ մեր սովորության, մի փոքր հեռու էինք պահում մեզ: Միայն ամեն ուր, տարագիրների ճաշարանից գալիս, մի րոպե հանգիստվում էր Գրիշա Ուսիյեվիչը, մի քաղցր յերիտասարդ ընկեր, վոր հետո սպանվեց ճաշարանում: Առաջինները բավականին կանոնավոր կերպով այցելում էր մեզ «Զեմլյաչկայի յեղեր-վորդին», մի սովից խելագարված բոյլշևիկ: Նա մասն էր գալիս մինչ այն աստիճան պատառոտված շորերով ու ցեխոտված, վոր նրան այլևս Զվիցերիայի գրադարանները չէին թողնում: Նա աշխատում էր Իլյիչին տանը գտնել՝ նրա հետ չրգիտեմ ինչ սկզբունքի խնդիրներ քննելու համար, և գալիս էր մինչև ժամը 9-ը, քանի դեռ Իլյիչը գրադարան չէր լինում գնացած: Վերսկեսու այս տեսակցությունները խելագար մարդու հետ սովորաբար այն հետևանքն էին ունենում, վոր հետո ցավում էր «ամեն բան աշխարհիս յերեսին», ինչպես ասում էր մի ծանոթ փոքրիկ աղջիկ, ուստի մենք զրադարան գնալուց առաջ սկսեցինք գնալ զբոսնելու լճի ափին: Մենք սենյակ էինք վարձել գվիցերական բանվորական շրջանում: Սենյակը շատ էլ նպատակահարմար չէր: Մի հին մոյակ տուն, յերեսի XVI դարում շինված, պատահանները կտրելի յեր բաց անել միայն գիշերները, վորովհետև այդ տանը յերշիկի գործա-

րան կար և բակից հոսած յերշիկի անտաների հոս էր գալիս:

Նոյն փողովն, ի հարկե, կտրելի յեր շատ ավելի լավ սենյակ վարձել, բայց մենք չէինք ուզում մեր բնականտաներիցը բաժանվել: Նրանք իսկական բանվորներ էին, վոր ասում էին կապիտալիզմը և բնագրամաժր դատարարում էին իմպերալիստական պատերազմը: Մեր բնակարանն իսկապես «միջագային» էր. յերկու սենյակում ապրում էին տերերը—արհեստով հյուան և կոշկակարներ, մի սենյակում՝ մի գերմանացի գինվորի—հացթխի կին յուր յերեսաներով, յերկրորդ սենյակում՝ մի խալացի, յերրորդ սենյակում՝ ավստրիացի գերասաններ, վոր մի զարմանալի շառագույն կատու ունեյին, չորրորդում՝ մենք, ուսաստանցի: Վոչ մի շովինիզմի հոս չէր գալիս, իսկ մի անգամ, յերբ մենք բնակարանի տիրուհու հետ խոհանոցում գաղի վառարանի վրա ամեն մեկս մեր կտոր միան էինք տապակում, տիրուհին վերգովված բացականչեց. «Զինվորներն իրենց գենքը պետք է իրենց կառավարությունների դեմ դարձնեն»: Սրանից հետո Իլյիչը սենյակը փոխելու մասին լսել անգամ չէր ուզում, և առանձնապես քաղցր բարե էր տալիս տիրուհուն:

Ափսոս վոր Զվիցերիայի սոցիալիստներն ավելի նվազ հեղափոխական տրամադրություն ունեյին, քան այս բանվորի կինը: Վաղեմի Իլյիչը մի ժամանակ փորձեց միջագային մասշտաբով գործել: Սկսեցինք հավաքել «Zum Adler» փոքրիկ կաֆեյում, մոտակա փոքրիկ փողոցում: Մի քանի ուսու լեհացի բոյլշևիկ, գվիցերացի սոցիալիստներ, մի քանի հոգի գերմանացի և խալացի յերիտասարդներից: Առաջին ժողովին հավաքվեցին մոտավորապես 40 հոգի: Իլյիչը բացատրեց իր տեսակետը պատերազմի առթիվ, ասաց, թե անհրաժեշտ է դատապարտել պրոլետարիատի դատին դավաճանած առաջնորդներին, առաջարկեց գործողությունների ծրագիր: Ոտա-

բազմիները, չնայելով վոր ինտերնացիոնալիստներ էյին հավաքվել, շփոթվեցին Իլյիչի վճռականությունից: Հիշում եմ զվիցերական յերիտասարդության մի ներկայացուցչի ճառը, վոր այն եր ասում, թե զորով բան չի կարելի անել, փաստն այն է, վոր մեր ժողովներն սկսեցին հալվել, և չորրորդ ժողովին յեկան միայն ուսաներն ու լեհացիները: Մի քիչ կատակ արինք ու ցրվեցինք մեր տները: Բայց այդ ժամանակին և վերաբերում Ֆրից Պլատտենի և Վիլլի Մյուրցենբերգի հետ ավելի սերտ կապ հաստատելը:

Մի տեսարան եմ հիշում մի քիչ ավելի ուշ ժամանակից: Մի անգամ անցանք Յուրիխի ուրիշ, ավելի չքեղ մասը և անակնկալ կերպով պատահեցինք Յուրիխի սոցիալիստական լրագրի խմբագիր Նոբսին, վոր այն ժամանակ ձախակողմյանների հետ եր: Նոբսը, հենց վոր Իլյիչին տեսավ, այնպիսի ձև արեց, իբր թե ուզում է տրամվայ նստել: Բայց և այնպես Իլյիչը կալավ նրան և կոճակիցը պինդ բռնած՝ սկսեց բացատրել նրան իր տեսակետը համաշխարհային հեղափոխության անխուսափելիության մասին: Կոմիսիական եր ձախակողմյան ուղղորտունիստներս կերպարանքը, վոր չգիտեր, թե ինչպես ազատվեր կատաղի ուսիցը, բաց Իլյիչի կերպարանքը, վոր ջղաձգորեն սեղմում եր Նոբսի կոճակն ու աշխատում եր նրան համոզել, ինձ վողբերդական թվաց: Յեղ չունի հսկայական յեռանդը, անհայտ վոչնչանում է անսահման անձնիրությունը աշխատավոր մասսաներին, ապարդյուն է տեղի ունեցող իրադարձության պարզ գիտակցությունը: Յեվ չգիտեմ ինչու՝ հիշեցի այն սպիտակ հյուսիսային գայլը, վոր տեսանք Իլյիչի հետ Լոնդոնի կենդանաբանական պարտիզում, և յերկար կանգնած էյինք նրա վանդակի առաջ: «Բոլոր գազանները ժամանակի ընթացքում ընտելանում են վանդակին. արջերը, վագրերը, առյուծները, — բացատրեց մեզ պահապանը: Միայն ուսական հյուսիսի սպիտակ գայլն է, վոր յերբեք չի ընտելանում վանդակին

— գիշեր ցերեկ զարկվում է վանդակի յերկաթե ձողերին»: Նոբսի քարոզելը վանդակի ձողերին զարկվել չե՞ր նշանակում...

Մենք պատրաստվում էյինք զրադարան գնալու, վոր յեկավ ընկ. Բրոնսկին և պատմեց մեզ փետրվարի հեղափոխության մասին: Իլյիչը մի տեսակ շվարեց: Յերբ վոր Բրոնսկին գնաց ու մենք մի փոքր ուշքի յեկանք, գնացինք լճի մոտ, վորտեղ ծածկի տակ ամեն ոք փակցնում էյին բոլոր զվիցերական լրագրները: Այն, հեռագրները Ռուսաստանի հեղափոխության մասին էյին խոսում:

Իլյիչը գես ու գեն եր բնկնում: Խնդրեց Բրոնսկուն, վոր խմանա, թե չե՞ կարելի արդյոք վոր և է կերպով մաքսանենդի միջոցով Գերմանիայովն անցնել Ռուսաստան: Շուտով պարզվեց, վոր մաքսանենդը կարող է հասցնել մինչև Բերլին: Բացի դրանից մաքսանենդը կապված եր Պարվուսի հետ, իսկ Պարվուսի հետ, վորը պատերազմի շնորհիվ հարստացել եր ու սոցիալ-շովինիստ դարձել, Վլ. Իլյիչը վոչ մի գործ չեր կամենում ունենալ: Ուրիշ ճանապարհ պետք է վորսնել: Ի՞նչ ճանապարհ: Կարելի է սովառնակով թռչել, ինչ անենք թե կարող են գնդակահար անել: Բայց ո՞ւր է այդ կախարդական սովառնակը, վորով կարելի յե հեղափոխություն անող Ռուսաստան հասնել: Իլյիչն անքուն գիշերներ եր լուսացնում: Մի անգամ գիշերն ասում է. «Գիտես, յես համը շվեդացու անցագրով կարող եմ գնալ»: Յես ծիծաղեցի: «Զի լինի, կարող ես յերագումդ խոսելով քեզ մատնել: Գիշերն յերագումդ կադետներ կր տեսնես, քնած տեղդ կասես, լրբեր, լրբեր — կիմանան, վոր շվեդացի չես»: Համենայն դեպս համը շվեդացու անցագրով գնալն ավելի իրագործելի բան եր, քան սովառնակով թռչելը: Իլյիչն իր ծրագրի մասին գրեց Շվեդիա Գոնեցկուն: Բայց, ի հարկե, բան զուրս չեկավ: Յերբ վոր պարզվեց, վոր զվիցերացի բնկերների ոգնությամբ կարելի կլինի անցաթուղթ ստանալ Գերմանիայով գնալու համար, Իլյիչը միանգամից իրեն հավա-

քեց և աշխատում եր գործին այնպիսի ձև տալ, վոր վոչ մի բան վոչ միայն գերմանական կառավարության, այլ և գերմանիայի սոցիալ-շովինիստների հետ համաձայնության գալու բնույթ չունենա, աշխատում եր ամեն ինչ իրավաբանորեն ձևակերպել: Համարձակ քայլ եր վոչ միայն այն պատճառով, վոր զրպարտության սպառնալիքը կար, հայրենիքի դավաճանության մեղադրանք, այլ և այն պատճառով, վոր վոչ մի վստահություն չկար թե Գերմանիան հիրավի բաց կթողնե և վոչ թե գերի կալահե բոլլշևիկներին: Այնուհետև, բոլլշևիկներից հետո, նույն ճանապարհով ուղևորվեցին և մենշևիկները և տարագիրները այլ խմբեր, բայց վոչ վոք սիրտ չեր անում առաջին անգամ: Յերբ վոր Բեռնից նամակ յեկավ, թե բանը սարքված և և կարելի չե այնտեղից ուղևորվել Գերմանիա, Իլյիչն առաջ. «կգնանք առաջին գնացքովը»: Մինչև գնացքը յերկու ժամ եր մնում: Յես թերահավատեցի: Պետք եր «ամբողջ տունը» վերջացնել, զրքերը զրադարանին հանձնել, բնակարանի տիրոջ վճարել և այն: «Մենակ գնա, յես վաղը կգամ»: — «Վոչ, գնանք»: «Տունը» վերջացրինք, զրքերը դարսեցինք, նամակները վոչնչացրինք, ջոկեցինք մի քանի կտոր սպիտակեղեն և ամենաանհրաժեշտ իրերը: Առաջին գնացքովը ճանապարհ ընկանք: Մենք կարող եյինք այդքան ել չշտապել, վորովհետև Զատիկ եր և այդ պատճառով մեր ուղևորությունը արգելքի հանդիպեց:

Բեռնի ժողովրդական տանն սկսան հավաքվել գնացող բոլլշևիկները. գնում եյինք մենք, Զինովները, Ուսիյեիչները, Խեսասա Արմանգը, Խարիտոնովը, Սոկոլնիկովը, Միխա Յիսակայան և ուրիշները: Գնում եր Բունդի անդամ մի կին յուր չքնաղ գանգրահեր չորս տարեկան Ռոբերտ վորդու հետ, վոր ուսերեն խոսել չգիտեր և խոսում եր միայն ֆրանսերեն: Ռուսաստանցու անունով գնում եր մեզ հետ Ռադեկը: Ուղեկցում եր մեզ Պլատոսինը:

Ամբողջ ճանապարհին գերմանացիներից և վոչ մեկի

հետ չեյինք խոսում: Բեռլինի մոտ մի առանձին կուպե նստեցին գերմանացի սոց.-դեմոկրատներ, բայց նրանց հետ մեզանից վոչ վոչ չխոսեց, և միայն Ռոբերտը մտավ նրանց կուպեն ու սկսեց հարց ու փորձ անել. «Le conducteur, du'est-ce guil fait»? չգիտեմ, պատասխանեցին արդյոք գերմանացիները Ռոբերտին, թե ինչ ե անում կոնդուկտորը, բայց նրանք իրենց հարցերը չկարողացան տալ բոլլշևիկներին: Վազոնի պատուհանից նայում եյինք և մեզ զարմացնում եր աղամարդկանց կատարյալ բացակայությունը. միայն կանայք, պատանիներ ու յերեխաներ եյին, թե քաղաքում և թե դյուղում: Մեզ համար ճաշ եյին բերում վազոնը — կոտլետներ վոլոսնով: Պարզ ե, վոր սեզում եյին ցույց տալ թե ամեն բան առատ ե Գերմանիայում: Անփորձ անցանք:

Ստոկհոլմում մեզ դիմավորեցին ճառերով, դահլիճում կարմիր դրոշ եյին կախել և ժողով սարքեցին: Ստոկհոլմը լավ չեմ հիշում, ուշ ու միաքս արդեն Ռուսաստանում եր: Ֆիննական փոքրիկ սահնակներով սահմանն անցանք: Արդեն ամեն ինչ սիրելի բաներ եյին, մեր յերրորդ կարգի խղճուկ վազոններ, ուս գինվորներ: Շատ լավ եր: Փոքր ինչ հետո Ռոբերտն արդեն մի հասակավոր զինվորի ձեռքի եր, փոքրիկ ձեռքը քցել եր նրա վզով ու մի բան եր բլբլացնում ֆրանսերեն, և լուրի պսքա եր ուտում, վոր գինվորն եր նրան ուտեցնում: Մերոնք կպան պատուհաններիցը: Կայարանների առաջ, վորոնցով մենք անց եյինք կենում, խմբով գինվորներ եյին կանգնած: Ուսիյեիչը գլուխը պատուհանից դուրս հանեց: «Կեցցե՛ համաշխարհային հեղափոխությունը», — աղաղակեց նա: Զինվորները շվարած նայեցին մեզ վրա: Մեր մոտովը մի քանի անգամ անցավ մի գունատ սպա-տեղակալ, և յերբ մենք Իլյիչի հետ անցանք կողքի դատարկ վազոնը, Իլյիչը նստեց նրա մոտ և սկսեց խոսել նրա հետ: Սպան պաշտպանվելու կողմնակիցներին եր, Իլյիչը յուր տեսակետն եր պաշտպանում — նույնպես սաստիկ գունատ եր:

Վագոնը կամաց-կամաց զինվորներ եյին հավաքվում. շուտով լիքը լցվեց: Զինվորները կանգնում եյին նստարանների վրա, վոր լավ լսեն ու տեսնեն նրան, վոր աջնպես հասկանալի խոսում եր հափշտակիչներն պատերազմի դեմ: Յեվրոպե առ բոլոր սճում եր նրանց ուշադրութունը, ավելի լարված եյին դառնում նրանց դեմքերը:

Բեթոտարովում մեզ գիմափորեցին Մարիա Իլյինիչնան, Շլյապնիկովը, Ստալը և ուրիշները: Կային բանվոր կանաչք: Ստալը շարունակ համոզում եր ինձ, վոր մի քանի վողջույնի խոսք ասեմ նրանց, բայց իմ բոլոր խոսքերն անհետացել եյին, յես վողջինչ չեյի կարող ասել: Ընկերները նստեցին մեզ հետ և սկսեցին պատմել: Շուտով հասանք Պիտեր:

Պիտերի մասսաները, — բանվորներ, զինվորներ, նավաստիներ — գիմափորում եյին իրենց առաջնորդին: Ինչպես եյին իմացել, վոր նա գալիս ե: Չգիտեմ: Չորս կողմը ժողովրդի ծով եր, ասրերք:

Ով վոր հեղափոխութուն չի տարել, չի կարող պատկերացնել նրա վեհ, փառանքի գեղեցկութունը:

Կարմիր դրոշներ, պատվավոր պահակախումբ Կրանշտատի նավազներից, Պետրոպոլովսկի բերդի սեփեկտորները, վոր լուսավորում են ճանապարհը Ֆինլանդիայի յերկաթուղու կայարանից մինչև Քշեսինսկայի առևտր, զրահապատ սթոններ, ճանապարհը պահպանող բանվորների ու բանվորուհիների շղթա: Իլյիչին կանգնեցնում են զրահապատի վրա: Նա խոսում ե, իսկ շուրջը ժողովրդական մասսաներն են, վորոնց նա աշխարհիս յերեսին ամենից շատ եր սիրում:

Հեղափոխական ժողովուրդը միանման փառանկությունով թե գիմափորեց յուր առաջնորդին և թե ճանապարհ դրեց դեպի գերեզման:

16 ապրիլի, 1924 թ.

## ԸՆԿ. ԳԵՂԱԿՈՒՇԻՆԵՐԻՆ

Յերեխա ժամանակս մայրս շատ բան եր պատմում ինձ իմ ծծմայր Մատրոնա Իվանովնայի մասին: Պսկովի նահանգի գյուղացի եր նա. ազեա եր, բայց շատ լավ բարի կին եր: Շատ եր սիրում ինձ: Տանում եր ինձ անտառ ու յուր գյուղական յերգերն եր յերգում ինձ համար: Յեվ մայրս պատմում եր. դառն կարիքն եր ստիպել իմ ծծմորը ծծմայր վարձվել և թողնել յուր ծծկեր յերեխային, Անդրյուշային: Ծծմորս սիրաբ ցավում եր յուր վորդու համար, թեպես վողջինչ չեր խոսում այդ մասին: Գյուղիցը լուրեր չեյին գալիս, իսկ հետո տեղեկութուն հասավ, թե մեռել ե Անդրյուշան: Յերբ վոր մայրս հայտնում ե այդ մասին Մատրոնա Իվանովնային, նա ցած ձայնով ասում ե. «Յես վաղուց գիտեյի, վոր Անդրյուշան մեռել ե»: Յեվ զրանից հետո ավելի սիրեց ինձ, վոր ոտար յերեխա եյի, և չեր ուզում տուն վերադառնալ, ուրիշ յերեխա չունեի այն ժամանակը — Անդրյուշան անդրանիկն եր: Բայց մարդիցը նամակ յեկավ. պահանջում եր, վոր Մատրոնա Իվանովնան գնա իր մոտ, գյուղը. իսկ «յեթե չգաս, — գրել եր նա կնոջը, — վոտիկանության ձեռքով բերել կր տամ քեզ, արջառի նման վիզդ պարան դցած կր բերեն ինձ մոտ»:

Դեռ փոքր աղջիկ ժամանակս հաճախ մտածում եյի, թե վատ բան ե, վոր կարիքը մորն ստիպում ե իր յերեխային թողնել, իսկ ամուսինն իր կնոջ վրա աղապիսի իշխանութուն ունի:

Հաճախ եյի հիշում ծծմորս: Յես իմ ծծմորն եյի հիշում, իսկ Վլադիմիր Իլյիչն իր դայակին: Վերջին ժամանակներն աչքերս լավ չեյին տեսնում, սկսեցի ակնոց բանեցնել: Վլադիմիր Իլյիչն ասում եր. «ակնոցը մաքուր պիտի լինի: Տուր սրբեմ: Դայակիս ակնոցը միշտ յես եյի սրբում»: Նրա դայակի կյանքն ել քաղցր չի յեղել, նույնպես դարդ ե տեսած յեղել, ուրիշ յերեխաների յե ավել իր սերը և Վլադիմիր Իլյիչն իր ամբողջ կյանքում հիշում եր նրան: Յեվ իր ամբողջ կյանքումը նա սրտին մոտ եր ընդունում գյուղացի կնոջ վիճակը, նրա դարդը:

Միշտ այն մասին եր մտածում, թե ինչպես պետք  
և զարթեցնել բանվոր ու գյուղացի կնոջ գիտակցությու-  
նը, ինչպես պետք է քաշել նրանց կազմակերպության,  
շարժման մեջ:

Յերբ վոր մենք Սիբիրումն ելինք, նա ինձ խորհուրդ  
տվեց, վոր մի բրոշյուր գրեմ կին-բանվորի մասին: Բրո-  
շյուրը գրեցի, իսկ նա հետևում եր, թե ինչպես եմ գը-  
րում, և հետո, յերբ Վլադիմիր Իլյիչն արտասահման  
գնաց «Իսկրա» անկեղալ լրագիրը հրատարակելու համար,  
հոգ տարավ, վոր այդ բրոշյուրը հրատարակվի: Յեվ ամեն  
անգամ, յերբ հնարավորություն եր լինում մի բան ա-  
նելու բանվոր ու գյուղացի կանանց գիտակցությունը  
բարձրացնելու համար, Վլադիմիր Իլյիչն ոգնում եր այդ  
գործին: Կանանց շրջանում գործողները — թե յես, թե  
լնկ. Ինեսսան, վոր իր ամբողջ կյանքը նվիրել եր բան-  
վոր ու գյուղացի կանանց մեջ աշխատելուն, թե լնկ.  
Ստալը և ուրիշները միշտ գիտում ելին Վլադիմիր Իլյի-  
չին, խորհուրդ հարցնում, և նա միշտ խորամուխ եր լի-  
նում գործի մեջ ու ղեկավար ցուցմունք տալիս:

Թե ինչ ուշի ուշով մտածում եր նա բանվոր և գյու-  
ղացի կնոջ ազատագրության, նրանց գիտակցությունը  
զարթեցնելու, կյանքի վերաշինության գործի մեջ քաշելու  
մասին, այդ յերևում է նրա ճառերիցն ու հոգվածներից:

Մի բան ել պատահեմ: Մահմեդական բանվոր ու գյու-  
ղի կանանց համագումար կար մի անգամ. այնտեղ նրանք  
ավելի ստրկացած, ավելի խավար ու ճնշված են, քան  
մեզանում: Վլադիմիր Իլյիչը զրույց արեց նրանց հետ:  
Հետո մենք խոսում ելինք այդ մասին: «Այս արդեն ա-  
մենաստորին խավերն են վեր կացել, ճնշվածներից ճնշ-  
վածները, — ասաց նա, — հիմա արդեն գործը հիմնավոր է,  
ել վերադարձ չկա»:

Ընկեր գեղջիկուհիներ, վոտքի յիկեք գետի գիտա-  
կից կյանք, սովորեցեք, վերաշինեցեք կյանքն այնպես,  
վոր բոլորն ել կարողանան լավ ապրել, կազմակերպվեցեք,  
միացեք կոմունիզմի կարգի գրոշի շուրջը:

Փետրվար 1924 թ. «Կրեյստայնիկ» № 4:



57

ԳԻՆԸ 15 ԿՈՊ.



ՀՀ Ազգային գրադարան





